ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010-56-03-60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝
Կարեն Մեժլումյան
Արտոնագիր՝ 110
Հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12 տարածք
Հեռախոս՝ 50-18-08, 077-073-073
e-mail: karen-mezhlumyan@mail.ru

Պատասխանող՝
ՀՀ բնապահպանության նախարարության
«Բնապահպանական ծրագրերի
իրականացման գրասենյակ» պետական
հիմնարկի տնօրեն՝ Վ. Մարտիրոսյան
Հասցե՝ Երևան 0047, Ա. Արմենակյան 129

23.07.2012թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ

Վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԱԿ) 29.05.2012թ-ին թիվ 171-ի 4 համարի գրությամբ հետևյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն՝ Վիկտոր Մարտիրոսյանին. «***Տեղեկատվություն ստանալու հարցում***

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Ստացե՞լ են արդյոք պարգևատրումներ (պարգևավճարներ, նվերներ) "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:

2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգևատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

3. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը,

4. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո

5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված հարցմամբ առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 01.06.2012թ. N1-01/151 գրությամբ:

Նշված փաստերը հաստատվում են 29.05.2012թ-ին թիվ 171-ի 4 հարցման և 01.06.2012թ. N1-01/151 պատասխանի օրինակներով:

Աաջին հարցման թերի պատասխանը ստանալուց հետո 20.06.2012թ. թիվ 174-ի 2 հարցմամբ ԻԱԿ-ը կրկին դիմել է պատասխանողին հետևյալ հարցմամբ «*Հարգելի պարոն Մարտիրոսյան,*

2012թ.-ի մայիսի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:

2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

3. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,

4. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի՝ պարգևատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարգևատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները):

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները»:

Նշված հարցմանն ի պատասխան ստացվել է պատասխանողի 02.07.2012թ. թիվ 1-01/160 գրությունը, որով տեղեկություն է տրվել նաև հարցման 3-րդ կետում նշված հարցման վերաբերյալ, սակայն հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին և 199 հոդվածին մերժվել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի՝

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է … հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3 հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են՝ տեղեկություններ ունեցող … պետական հիմնարկներ … և դրանց պաշտոնատար անձինք,
- 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»:
- 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, չի տրամադրել 29.05.2012թ. և 20.06.2012թ. հարցումների 2 կետով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի որ աշխատակիցներն են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին և 199 հոդվածին հղում կատարելով 02.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը ևս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե՝ անվանական, բացի այդ, աշխատողին տրամադրված պարգևը կամ պարգևավճարի չափը ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) և ո՛չ էլ 199 հոդվածով սահմանված՝ աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ:

Այս հարցին անդրադարձել է նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, իր 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշմամբ, որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ մասի համաձայն վկայակոչում ենք որպես իրավական փաստարկ: Նշված դատական ակտով վերաքննիչ դատարանը որոշել է. «*Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով կայացրած վճիռը բեկանել և փոփոխել, կայացնելով նոր դատական ակտ: Այն է՝*
Լևոն Բարսեղյանի հայցը բավարարել մասնակիորեն:
1. Ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:
2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին Լևոն Բարսեղյանին տրամադրել 2010 թվականի հունվարի 18-ի թիվ 1 հարցումով հայցված հետևյալ տեղեկատվությունը՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցներից ովքեր են որպես խրախուսանքի միջոց պարգևատրվել «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ից ձեռք բերված Breitling մակնիշի շվեյցարական արտադրության ժամանացույցներով՝ հիշատակել պարգևատրվածներին անուն-ազգանուններով և պաշտոններով« ինչպես նաև հիշատակելով նրանց հանձնված ժամացույցները՝ ըստ

տեսակների»:

Վերաքննիչ դատարանը վերը մեջբերված որոշումը կայացրել է հետևյալ իրավական հիմնավորումներով. «*Բողոք բերած անձի հղումը «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, ինչպես նաև՝ դրա հետ կապված փաստարկները, հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.*
«Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ (հեռախոսային տեղեկատուներ, հասցեների գրքեր, կենսագրական տեղեկատուներ, մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրում և այլն)»:
Բողոք բերած անձը վկայակոչելով նշված իրավական նորմերը, չի հիմնավորել նշված օրենքի իմաստով հայցվող տեղեկատվությունը անհատական տվյալ հանդիսանալու հանգամանքը:
Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել նշված օրենքով կարգավորվող իրավահարաբերություններին վերաբերող նորմերը:
«Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»:
Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ «անհատական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը».
Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենքը կարգավորվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները, իսկ անհատական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:
Այսինքն՝ նշված իրավական նորմերով կարգավորվում են անձի անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության հետ կապված հարաբերությունները, մինչդեռ տվյալ դեպքում պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, որի տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում հարկային ծառայողին վերաբերող տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: Ավելին, այդ տեղեկատվությունը չի կարող համարվել անհատական տվյալ, քանի որ վերաբերում է երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ խրախուսանքի տեսակ՝ հուշանվերով պարգևատրում, կիրառելու հետ կապված՝ այսինքն՝ պետական մարմնում գործունեության հետ կապված հարաբերություններին:
Բացի այդ, հարցման պատասխանում նշված օրենքը չի վկայակոչվել, իսկ պահանջվող տեղեկատվությունը, որպես Կոմիտեի համապատասխան աշխատակիցների անհատական (անձնական) կյանքին վերաբերվող տվյալներ, չեն դիտվել»:

Ինչպես տեսնում ենք, վարչական վերաքննիչ դատարանը որպես անհատական տվյալ չի համարել հարցմամբ պահանջվող կոնկրետ անձանց պարգևատրելու վերաբերյալ տեղեկությունները, ուստի առավել ևս այդպիսին չի կարող լինել չկոնկրետացված անձի, զուտ հաստիքով, առանց անուն ազգանունի նշման անձի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկությունը, որը ենթակա էր տրամադրման 5-օրյա ժամկետում, սակայն չի տրամադրվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝

- 189.7 հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական … հիմնարկի … պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:
- 223 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 189[7] հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ

իրավաբանական անձանց հայցադիմումով,

- 254 հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի … 189[7] հոդվածներով … նախատեսված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 գլխում ներառված՝ 151 հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Պատասխանողը լինելով պետական հիմնարկի պաշտոնատար անձ, պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ուստի ենթակա է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72 հոդվածով ու 26 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի կողմից երկու անգամ մերժելու համար նրան տուգանել 30.000 (երեսուն հազար) դրամի չափով:
2. Պատասխանողից բռնագանձել նաև դատական ծախսերի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Հարցումները,
3. Պատասխանները,
4. Քաղ. Ծառ. Խորհրդի գրությունը,
5. Հայցադիմումը պատասխանողի կողմից ստանալու մասին ապացույց,
6. Լիազորագիր,
7. Արտոնագրի պատճեն:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան